ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

15.07.2026թ.
№ 285

**«ԱՄՈՒՐԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ**
**ԼԵՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**
**(էլ. փոստ՝ amura.tender@mail.ru)**

Հարգելի՛ տիկին Հարությունյան,

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ի և «Ամուրա» ՍՊԸ-ի միջև 10.06.2026թ. կնքված թիվ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/28-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեին ֆինանսական միջոցի վերաբերյալ ծանուցումն ստանալուց հետո՝ 20 օրացուցային օրվա ընթացքում: Միաժամանակ, կողմերի միջև 29.06.2026թ. կնքվել է համաձայնագիր, որով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 28.07.2026թ: Բացի այդ, 29.06.2026թ. գրությամբ հայտնել եք, որ չեք կարող մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները՝ առաջարկելով մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը վաղաժամկետ լուծել այն: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը՝ ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն միակողմանիորեն լուծում է «Ամուրա» ՍՊԸ-ի հետ 10.06.2026թ. կնքված թիվ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/28-1» գնման պայմանագիրը՝ 8-րդ չափաբաժնի մասով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ